

Եվրոպական հարևանության քաղաքականության ազդեցությունը ՀՀ տնտեսության զարգացման վրա

ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, Միջազգային տնտեսական հարաբերությունների
ամբիոն, տ.գ.թ. Գրիգոր Ռաֆայելի Հայրապետյան
ԵՊՀ Բանբեր, Երևան 2009թ., 2(128), էջ 141-149

2004թ. մայիսի 1-ին ԵՄ համալրվեց նոր հարևան պետություններով՝ Ուկրաինա, Բելառուս, Մոլդովա, Ալժիր, Եգիպտոս, Իսրայել, Հորդանան, Լիբանան, Լիբիա, Մարոկո, Սիրիա, Թունիս և Պաղեստին: Հատուկ առաջարկով նոր հարևանների շարքին դասվեցին նաև Ադրբեջանը, Հայաստանը և Վրաստանը, իսկ Ռուսաստանին տրվեց հատուկ արտոնություններ ունեցող գործընկերոջ կարգավիճակ: Այս հանգամանքը Եվրոպայի քաղաքատնտեսությունն արմատական փոփոխությունների ենթարկեց: Այդ փոփոխությունները ընդհանուր առմամբ վերագրվում են ինչպես նոր անդամակցած երկրներին, այնպես էլ արևելյան և հարավային նոր հարևան երկրներին: Արդյունքում Եվրոպական հանձնաժողովը (European Commission, EC) ընդունեց «Եվրոպական հարևանության քաղաքականություն» (European Neighborhood Policy, ENP) ռազմավարական փաստաթուղթ՝ սահմանելով նոր հարևան երկրների հետ հարաբերությունների և ֆինանսական օժանդակության նոր կառուցվածքը¹:

Եվրոպական հարևանության քաղաքականությունը ենթադրում է թույլ տալ այս հարևան երկրներին մասնակցելու ԵՄ հիմնական քաղաքականություններին ու ծրագրերին և ԵՄ միանսական շուկային: Եվրոպական հարևանության քաղաքականության մասնակիցներից սպասվում է, որ վերջնական արդյունքում նրանք պետք է ձևավորեն ԵՄ հետ այնպիսի հարաբերություններ, ինչպես Եվրոպական տնտեսական գոտու (European Economic Area) անդամները՝ Նորվեգիա, Իսլանդիա, Շվեյցարիա և Լիխտենշտեյն:

ԵՄ նոր ձևավորվող հարաբերություններն իր նոր հարևան երկրների (հատկապես Հայաստանի) հետ և Եվրոպական հարևանության քաղաքականության տնտեսական ազդեցությունը ինչպես ԵՄ, այնպես էլ նոր հարևան երկրների վրա համապարփակ ու ընդգրկուն մի վերլուծության թեմա է: Այստեղ մենք կսահմանափակվենք միայն ներկայացնելով Եվրոպական հարևանության քաղաքականության ազդեցությունը նոր հարևան երկրների (հատկապես Հայաստանի) տնտեսության վրա: Նախ՝ արդյոք Եվրոպական հարևանության քաղաքականությունը բավականաչափ գրավիչ է, որպեսզի նոր հարևան երկրների կառավարություններին դրդի ընդունելու կամ արագացնելու այնպիսի տնտեսական և կառավարման բարեփոխումներ, որոնք դրվել են նոր անդամակցած

¹ St'u "European Commission", 2004a, May:

երկրների առջև իրենց անդամակցության ժամանակ: Այդ բարեփոխումների թվին են դասվում՝ արտաքին առևտրի ազատականացումը, սեփականաշնորհման գործընթացը, ԵՄ օրենսդրության համապատասխանեցումը և այլն:

Այստեղ ամբողջ հարցը կայանում է նրանում, որ Եվրոպական հարևանության քաղաքականությունը դիտարկվում է որպես ԵՄ անդամակցության այլընտրանք²: Դա հաստատեց նաև Եվրոպական հանձնաժողովի արտաքին հարաբերությունների տնօրեն Լանդաբուրուն՝ նշելով, որ Եվրոպական հարևանության քաղաքականության հիմնական նպատակը ԵՄ ընդլայնման այլընտրանքն է և ոչ թե անդամակցության նախնական քայլ կամ փուլ³: Մյուս կողմից, բացառելով անդամակցության հնարավորությունը, Եվրոպական հարևանության քաղաքականությունը հակասում է Ամստերդամի համաձայնագրին, ըստ որի՝ ԵՄ անդամակցությունը բաց է բոլոր Եվրոպական երկրների համար, որոնք բավարարում են Կոպենհագենի չափանիշները⁴:

Եվրոպական հարևանության քաղաքականությունը հետապնդում է երեք հիմնական նպատակ.

- Այն փորձում է ընդլայնված Եվրոպան շրջապատել այնպիսի հարևաններով, որոնք կիսում են ԵՄ արժեքային համակարգը և հետապնդում ու իրականացնում են անվտանգության և արտաքին այնպիսի քաղաքականություն, որը հիմնականում համատեղելի է ԵՄ-ի որդեգրած արժեքներին:
- Առաջին նպատակին հասնելու համար Եվրոպական հարևանության քաղաքականությունը նոր հարևան երկրների համար պետք է ապահովի միասնական շուկա մուտք գործելու անհրաժեշտ պայմաններ և տրամադրի տեխնիկական լայն օժանդակություն:
- Ըստ Եվրոպական հարևանության քաղաքականության՝ հետագայում ԱՊՀ և Միջերկրածովյան տարածաշրջանի երկրների (նոր հարևան երկրներ) ԵՄ անդամակցություն չի նախատեսվում:⁵

Եվրոպական հարևանության քաղաքականության վերջին նպատակը, մեր կարծիքով, այդքան էլ ձեռնտու չէ ԱՊՀ արևմտյան երկրների (հատկապես Ուկրաինայի) և Կովկասյան տարածաշրջանի պետությունների համար, որոնք ի վերջո ձգտում են լրիվ անդամակցության:

Եվրոպական հարևանության քաղաքականության ազդեցությունը նոր հարևան երկրների տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման վրա կախված կլինի վերջինիս

²Տե՛ս “European Commission”, 2004a, Verheugen, 2004:

³ Տե՛ս “European Commission Observer”, 2006:

⁴ Տե՛ս <http://europa.eu.int/scadplus/leg/en/s50000.htm> (ինտերնետային կայքն այցելվել է 27.05.2009թ.-ին):

⁵ Տե՛ս Verheugen Gunter. “The European Neighborhood Policy”, Bratislava, 2004:

ազդեցության մանակարդակից: Մյուս կողմից, չնայած Եվրոպական հարևանության քաղաքականությունը իրավական մոտարկման և ԵՄ ստանդարտներին համապատասխանեցման միջոցով պետք է խթանի արտաքին առևտուրը նոր հարևան երկրների և ԵՄ միջև, այնուամենայնիվ ԵՄ միասնական շուկա մուտք գործելու հնարավորությունը և ՕՈՒՆ-ի ներհուքի զգալի ավելացումը համարվում են շատ հեռահար իրողություններ:

Արևելյան գործընկերություն (Eastern Partnership) ծրագիրը որպես Եվրոպական հարևանության քաղաքականության լրացում 2008թ. մայիսի 26-ին նախաձեռնել են Լեհաստանը և Շվեդիան: Այս ծրագրի մեջ ընդգրկվելու են Ադրբեջանը, Վրաստանը, Հայաստանը, Մոլդովան, Ռկրաինան և Բելառուսը⁶: Այս նոր ծրագրի անհրաժեշտությունը պայմանավորված էր նրանով, որ ԵՄ նոր հարևան երկրների տնտեսական, քաղաքական և մշակութային առանձնահատկությունները բավական տարբերվում են: Այդ պատճառով Արևելյան գործընկերության շրջանակներում ԵՄ ցուցաբերելու է տարբերակված մոտեցում յուրաքանչյուր գործընկերոջ հանդեպ: Մյուս կողմից, վերը նշված բոլոր երկրները կատարել են զգալի տնտեսական, քաղաքական և սոցիալական բարեփոխումներ և ցանկություն են հայտնել էլ ավելի ինտեգրվել ԵՄ-ին⁷: Այսպիսով, Արևելյան գործընկերություն ծրագիրը ուղղված է Եվրոպական միության արևելյան հարևանների հետ համագործակցությունը խորացնելուն: Եվրոպական միության կողմից Արևելյան Գործընկերության շրջանակներում նախաձեռնվող տարբեր ծրագրերի համար նախատեսվում է մինչև 2013թ. գործընկեր երկրներին տրամադրել շուրջ 600 մլն. եվրո ֆինանսավորում:

Արևելյան գործընկերության ծրագիրն ունենալու է ինչպես երկկողմանի, այնպես էլ բազմակողմանի ուղղվածություն⁸: Երկկողմանի ուղղվածության հիմնական բաղադրիչներն են

- քաղաքական ավելի սերտ կապեր,
- ազատ առևտրի գոտիների ստեղծում,
- ԵՄ և Արևելյան գործընկերների միջև շարժունության խթանում,
- էներգետիկ անվտանգություն,
- տնտեսական և սոցիալական զարգացման օժանդակում:

Բազմակողմանի ուղղվածության հիմնական բաղադրիչներն են.

- սահմանների կառավարման ծրագիր,
- օժանդակում փոքր և միջին ձեռնարկություններին,

⁶ Բելառուսի մասնակցության աստիճանը Արևելյան գործընկերությանը կախված է լինելու Բելառուս-ԵՄ հարաբերությունների զարգացումից:

⁷ Այստեղ հարկ է նշել, որ ինչպես Եվրոպական հարևանության քաղաքականության դեպքում, Արևելյան գործընկերությունը չի համարվում ԵՄ անդամակցության նախապայման:

⁸ St'u Brussels, MEMO/08/762, 3 December 2008:


- տարածաշրջանային էներգետիկ շուկաներ,
- հարավային էներգետիկ միջանցք,
- Տարերային և տեխնաժին աղետների կանխում:

«Արևելյան գործընկերություն» ծրագիրը հնարավորություններ կընձեռնի առավել խորացնել հարաբերությունները ԵՄ հետ, կենտրոնանալով այնպիսի ոլորտների վրա, ինչպիսիք են օրինակ իրավական կարգավորումների մոտարկումը: Բացի այդ, Արևելյան գործընկերության տնտեսական ինտեգրման և կարգավորիչ քաղաքականությամբ նախատեսվում են ազատ առևտրի գոտիների ստեղծում:

Եվրամիությունը Արևելյան գործընկերության շրջանակներում նախաձեռնվող տարբեր ծրագրերի համար նախատեսում է մինչև 2013թ. գործընկեր երկրներին տրամադրել շուրջ 600 մլն. եվրո ֆինանսավորում:

Արևելյան գործընկերության ծրագրի վերաբերյալ բացասական դիրքորոշում ունի Ռուսաստանի Դաշնությունը, ինչի մասին վկայում են վերջին շրջանում պաշտոնական տարբեր մակարդակներով կատարվող հայտարարությունները: Այսպես, ԱՊՀ գործադիր տնօրեն Սերգեյ Լեբեդևը ասել է, որ Արևելյան գործընկերության ծրագրին մասնակցող պետությունների համար դժվարություններ կառաջանան ԱՊՀ-ում, քանի որ այդ պետությունների կողմից իրենց օրենսդրությունը ԵՄ օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելը կառաջացնի ԱՊՀ շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունների փոփոխության անհրաժեշտություն, և այդ երկրները կկանգնեն երկընտրանքի առջև⁹:

Գծապատկեր 1: ԵՄ 15, ԵՄ 10 և Հարևան երկրների մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի (ըստ գնողունակության պարիտետի) համեմատությունը 2007թ. (հազ. դոլար)




(Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2008)

⁹ Տե՛ս <http://www.belta.by/en/pointOfView?id=369787&pointOfView=1> (ինտերնետային կայքն այցելվել է 29.05.2009թ.-ին):

ԵՄ նոր հարևան երկրների տնտեսական իրավիճակի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ նոր հարևան բոլոր երկրներում բարեկեցության մակարդակը՝ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ով (ըստ գնողունակության պարիտետի), ԵՄ 15 երկրների միջին մակարդակի հետ համեմատած, բավական ցածր է և գրեթե երկու անգամ քիչ է ԵՄ նոր անդամակցած 8 երկրների միջին մակարդակից (տե՛ս գծապատկեր 1): Այս տարբերությունը զգալիորեն խոչընդոտում է հարևան երկրների և ԵՄ միջև առևտրի ինտեգրման գործընթացը: Այդ իսկ պատճառով այս հանգամանքը կարող է դառնալ ազդեցիկ գործոն՝ Եվրոպական հարևանության քաղաքականությունը ԵՄ կողմից որպես ԵՄ անդամակցության այլընտրանք դիտարկվելու առումով:

Սակայն, վերջին տասնամյակում (ասիական ֆինանսական ճգնաժամից հետո, որը տարածվել էր նաև Ռուսաստանի վրա) այս երկրները, հատկապես Հայաստանը և Ադրբեջանը, գրանցել են զգալի տնտեսական աճ, որը մի քանի անգամ գերազանցում է ԵՄ 15 միջին մակարդակը (տե՛ս գծապատկեր 2): Սակայն այստեղ պետք է նկատի ունենալ, որ նոր հարևան երկրների մեծ մասը նորանկախ պետություններ են (օրինակ՝ ԱՊՀ երկրները), որոնք անկախացումից լուրջ տնտեսական դժվարությունների հանդիպեցին, ուստի դրանց տնտեսության մեջ անգամ աննշան դրական փոփոխությունները ապահովվում են տնտեսական աճի այդպիսի բարձր տեմպեր:

Գծապատկեր 2: ԵՄ 15 և նոր հարևան երկրների տնտեսական աճի տեմպերը 2007թ.(%)




(Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2008)

Այս երկրները զգալի հաջողություններ են գրանցել նաև կայուն մակրոտնտեսական և ֆիսկալ քաղաքականություն հաստատելու գործընթացներում:

Մասատրիխտի չափանիշների համաձայն՝ ԵՄ տնտեսական և արժույթային միության անդամակցության համար բյուջեի պակասուրդը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 3%: Այստեղ

հարկ է նշել, որ 2004-2007թթ. ընկած ժամանակաշրջանում բոլոր նոր հարևան երկրներում, բացի Ուկրաինայից և Եգիպտոսից, այս ցուցանիշը ցածր է եղել պահանջվող պակարդակից¹⁰: Մյուս կողմից, 2004թ. մայիսի 1-ին անդամակցած երկրներից Հունգարիայի, Չեխիայի և Լատվիայի դեպքում այս ցուցանիշը բավական բարձր է պահանջվող մակարդակից (տե՛ս գծապատկեր 3),

Գծապատկեր 3: Բյուջեի պակասուրդի/ավելցուկի հարաբերությունը ՀՆԱ-ին 2007թ.(%)




(Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2008)

Արևմտյան ԱՊՀ երկրներում պետական պարտքի հարաբերությունը ՀՆԱ-ին (Մասստրիխտի մյուս չափանիշը) չի գերազանցում ՀՆԱ-ի 60%: Ավելին, այս երկրներում այս ցուցանիշը նույնիսկ ցածր է ԵՄ 10 երկրների միջին մակարդակից (տե՛ս գծապատկեր 4):

¹⁰ 2004թ. այս ցուցանիշը Ուկրաինայի համար կազմել է -3.19%, իսկ 2007թ. Եգիպտոսի համար՝ -3.29%:

Գծապատկեր 4: Պետական պարտքի հարաբերությունը ՀՆԱ-ին 2007թ.(%)



(Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2008)

Մյուս կողմից նոր հարևան երկրների հարաբերականորեն «ուժեղ» ֆիսկալ դիրքերը կարող են նաև դիտարկվել որպես թերզարգացած ֆինանսական համակարգի և ոչ բարենպաստ ներդրումային միջավայրի հետևանք՝ դրանով իսկ բացառելով պահանջվող ֆինանսական միջոցների ոչ ինֆլյացիոն ձևերի էքստենսիվ օգտագործումը:

Այժմ տեսնենք, թե Եվրոպական հարևանության քաղաքականությունը ինչ հնարավոր ազդեցություն կարող է ունենալ ՀՀ տնտեսության վրա: Այսպես, Եվրոպական նոր հարևանության քաղաքականության շրջանակներում արդիական են հետևյալ հարցերը.

1. Արդյո՞ք կարող է Եվրոպական հարևանության քաղաքականությունը ՀՀ տնտեսության համար կրկնել ԵՄ նոր անդամ երկրների անցումային շրջանի տնտեսական հաջողությունները,
2. Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում իրականացվող շուկայական բարեփոխումները կարո՞ղ են զգալիորեն բարելավել միասնական շուկա մուտք գործելու պայմանները, ապահովել ՕՌԻՆ-ի ներհույս, վերակառուցել և մոդերնիզացնել ՀՀ տնտեսությունը:

Այստեղ ամբողջ խնդիրն այն է, որ նոր հարևան երկրներն ավելի «աղքատ» են և ունեն շատ ավելի ոչ միասնա տնտեսություններ, քան ԵՄ նոր անդամակցած երկրները: Սա տեսանելի է տնտեսական (մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ, կառուցվածքային բնութագիչներ և այլն) և քաղաքական առումներով: Այս ենթատեքստում Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում իրականացվող շուկայական բարեփոխումները Հայաստանի և, ասենք, Ուկրաինայի կամ ցանկացած այլ հարևան երկրի համար իրենց բնույթով զգալիորեն տարբեր կլինեն:

Եվրոպական հարևանության քաղաքականության տնտեսական օգուտները պետք է լինեն դրական և շոշափելի, որպեսզի իրականացվող շուկայական բարեփոխումներն ապագայում տան սպասվող արդյունքներ: Այս առումով միասնական շուկայի ընդլայնմանն ուղղված ոչ ԵՄ անդամ երկրների (Նորվեգիա, Իսլանդիա, Լիխտենշտեյն և Շվեյցարիա) նախկին փորձը բավական հուսադրող է: Սակայն նոր հարևան երկրները դեռևս չունեն բավական որակյալ ենթակառուցվածքներ, նրանց մոտ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն շատ ցածր է, և այդ երկրներում բավական մեծ է քաղաքական ռիսկը: Այս հանգամանքն ուղղակիորեն ուժեղացնում է Եվրոպական հարևանության քաղաքականության մյուս տարրերի/բաղադրիչների կարևորությունը¹¹: Այստեղ Եվրոպական հարևանության քաղաքականության այլ տարրեր կամ բաղադրիչներ ասելով հիմնականում նկատի ունենք ֆինանսական օժանդակությունը և ենթակառուցվածքների զարգացումը (հատկապես տրանսպորտային և էներգետիկ ոլորտներում):

Այսպիսով, ՀՀ տնտեսության համար գերակա խնդիր են դառնում տնտեսության կառուցվածքի բարելավումը և արտադրվող արտադրանքի տարբերակումը, քանի որ եվրոպական ինտեգրումը կարող է նաև որոշ բացասական կողմեր ունենալ: Բացասական կողմերից կարող է հանդիսանալ հետագա մասնագիտացումը ռեսուրսների և էներգակիրների արտահանման մեջ (օրինակ՝ Ադրբեյջանի դեպքում):

Եվրոպական հարևանության քաղաքականությունը, որը նպատակաուղղված է ԵՄ միասնական շուկա ազատ մուտք գործելու հնարավորության ապահովմանը, կարող է զգալի օգուտներ բերել հարևան երկրներին: Մաքսային և ֆինանսական ոլորտներում իրավական բարեփոխումները կխթանեն արտաքին առևտրի և գործարարության հետագա զարգացմանը: ԵՄ կարգավորման ստանդարտների համապատասխանեցումը կարող է էական ազդեցություն չունենալ, եթե Եվրոպական հարևանության քաղաքականությունը չբարելավի նոր հարևան երկրների մուտքը միասնական շուկա:

Այս ենթատեքստում առկա առևտրային ռեժիմների փոփոխությունները խոստումնալից չեն, քանի որ նոր հարևան երկրների արտաքին առևտուրը ԵՄ հետ հիմնականում կարգավորվում է Ընկերակցության և համագործակցության համաձայնագրով, որն ինչ-որ չափով ոչ ԱՀԿ անդամ երկրների համար¹² համընկնում է ԱՀԿ սկզբունքներին¹³:


¹¹ St' u Dodini Michaela and Marco Fantini, "The European Neighborhood Policy: Implications for Economic Growth and Stability", Mimeo, Brussels, CEPS, 2004:

¹² Նոր հարևան երկրներից միայն, Վրաստանը (2000թ. հունիսի 14) , Մոլդովան (2001թ. հունիսի 26), Հայաստանը (2003թ. փետրվարի 5) և Ուկրաինան (2008թ. մայիսի 16) են անդամակցել ԱՀԿ-ին:

¹³ St' u Aslund Anders and Andrew Warner, "The EU Enlargement: Consequences for the CIS Countries", Aldershot, Burlington, 2004:

Արևմտյան ԱՊՀ երկրներից դեպի ԵՄ արտահանման բաժինը շատ ավելի քիչ է, քան Հարավարևելյան Եվրոպայի նոր անդամակցած և թեկնածու երկրներինը¹⁴ (տե՛ս գծապատկեր 5): Այս հանգամանքը չի կարող միանշանակ բացատրվել երկրի աշխարհագրական դիրքով, քանի որ Բելառուսը ԵՄ 27-ի հետ ունի ընդհանուր սահման և աշխարհագրորեն ավելի մոտ է կենտրոնական Եվրոպային, քան Ռումինիան, Բուլղարիան և Թուրքիան¹⁵, սակայն Բելառուսից դեպի ԵՄ արտահանման բաժինը շատ ավելի քիչ է, քան նշված երկրներից որևէ մեկինը:

Գծապատկեր 5: Արտահանման բաժինը ԵՄ 27 երկրների հետ արտաքին առևտրում 2007թ.(%)



(Աղբյուր՝ “Eurostat”, Statistical regime 4)

Ըստ Ասլունդի և Վորների ԱՊՀ արևմտյան երկրների ԵՄ երկրների հետ արտաքին առևտրում հարաբերականորեն արտահանման քիչ բաժինը կարող է բացատրվել այդ երկրների ԵՄ միասնական շուկա արտոնյալ պայմաններով մուտք գործելու բացակայությամբ¹⁶: ԵՄ հովանավորչական քաղաքականությունը հատկապես բարձր է գյուղատնտեսական, տեքստիլ, քիմիական ապրանքների և մետաղագործական ոլորտում, իսկ այս ապրանքախմբերը բավական մեծ տեսակարար կշիռ են կազմում ԱՊՀ երկրների արտահանման կառուցվածքում: Այսպիսով, կարող ենք նշել, որ ԵՄ արտաքին առևտրային

¹⁴ԵՄ թեկնածու երկրներն են՝ Խորվաթիան, Մակեդոնիան և Թուրքիան, իսկ պոտենցիալ թեկնածու երկրներն են՝ Ալբանիան, Բոսնիան և Հերցեգովինան, Մոնտենեգրոն, Սերբիան, ինչպես նաև Կոսովոն՝ համաձայն ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի 1244/99 որոշման:


¹⁵ Համաձայն Բայերսի (Byers, John. (2000) “Great Circle: Distances between Capital Cities”.) Միևսկը գտնվում է Բրյուսելից 1605 կմ. հեռավորության վրա, իսկ Սոֆիան, Բուխարեստը և Անկարան համապատասխանաբար 1698, 1770 և 2513 կմ.:

¹⁶Տե՛ս Aslund Anders and Andrew Warner, “The EU Enlargement: Consequences for the CIS Countries”, Aldershot, Burlington, 2004:

քաղաքականությունը «խոչընդոտներ» է ստեղծում ԱՊՀ երկրներից դեպի ԵՄ արտահանման համար:

Ինչպես նկատում ենք գծապատկեր 5-ից, դեպի ԵՄ երկրներ արտահանման իր բաժնով Հայաստանը գերազանցում է միայն Ուկրաինային և Բելառուսին: Սակայն, 2007թ. տվյալներով դեպի ԵՄ Հայաստանի արտահանման ավելի քան 85% բաժին է ընկել մետաղներ և թանկարժեք քարեր ապրանքախմբին, իսկ Բելառուսի և Ուկրաինայի արտահանման կառուցվածքը բավական տարբերակված է: ԱՊՀ երկրներից դեպի ԵՄ արտահանման համեմատաբար մեծ բաժնով առանձնանում են Ռուսաստանը, Վրաստանը և Ադրբեջանը, որոնց արտահանման կառուցվածքում գերակշռում են նավթն ու գազը: Մասնավորապես, Ադրբեջանի արտահանման ծավալը դեպի ԵՄ գրեթե երեք անգամ աճել է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցումից հետո՝ 2007թ. կազմելով 11.7 մլրդ. դոլար¹⁷: Այսպիսով, շնորհիվ նավթի արտահանման ներկայումս Ադրբեջանը կովկասյան տարածաշրջանում համարվում է ԵՄ ամենամեծ առևտրային գործընկեր երկիրը: 2007թ. տվյալներով Ռուսաստանն արտաքին ապրանքաշրջանառության ծավալով ԵՄ համար հանդիսացել է երրորդ գլխավոր առևտրային գործընկեր երկիրը ԱՄՆ-ից ու Չինաստանից հետո:

Գծապատկեր 6: Մեկ շնչին բաժինը ընկնող հանրագումարային ՕՈՒՆ-ի բաժինը 1989-2007թթ. (հազ. դոլար):



(Աղբյուր՝ “Eurostat”, Statistical regime 4)

Այսպիսով, հիմնվելով ԵՄ նոր անդամ երկրների փորձի վրա, կարող ենք նշել, որ ԵՄ ինտեգրացիոն գործընթացներին Հայաստանի մասնակցության հիմնական օգուտները

¹⁷ Այստեղ համեմատության համար հարկ է նշել, որ 2005թ. դեպի ԵՄ Ադրբեջանի արտահանման ծավալը կազմել է 4 մլրդ. դոլար:

կարող են ստացվել ՕՈՒՆ-ի ներհուսքից: Մեր կարծիքով, ՕՈՒՆ-ի ներհուսքի համար խթան կարող է դառնալ ինչպես աշխարհագրական, այնպես էլ մշակութային մերձեցումը ԵՄ հետ: Ինչպես ցույց է տալիս նոր անդամ երկրների փորձը, ՕՈՒՆ-ը կարող են զգալի բարելավել և մոդեռնիզացնել վերամշակող արդյունաբերության, էներգետիկայի և ֆինանսական ոլորտների կառուցվածքը:

Ինչպես նկատում ենք գծապատկեր 6-ից, ԱՊՀ արևմտյան երկրներում ՕՈՒՆ-ի մակարդակը զգալի ցածր է: Մի շարք գործոններ՝ շուկայի տարողունակությունը, աշխարհագրական դիրքը, տրանսպորտային ու հեռահաղորդակցման ենթակառուցվածքները և այլն, կարող են ԵՄ նոր հարևան երկրներում ՕՈՒՆ-ի ցածր մակարդակի պատճառ դառնալ: Հայաստանի դեպքում այս ամենին ավելանում է նաև մեկ այլ շատ կարևոր գործոն՝ Ղարաբաղի հիմնախնդիրը: 1999-2006 թթ. ընկած ժամանակաշրջանում Հայաստանը դասվել է աշխարհի 10 ամենառիսկային (արտաքին կոնֆլիկտ) երկրների շարքը՝ միջին առումով գրավելով 8-րդ տեղը¹⁸: Մեր կարծիքով, այս գործոնը, անկախ ԵՄ ինտեգրացիոն գործընթացներից և մյուս այլ գործոննից (բարձր տրանսպորտային ծախսեր, ոչ բավարար չափով զարգացած ենթակառուցվածք և այլն), իր բացասական ազդեցությունն է թողնում ՀՀ տնտեսության վրա (օրինակ՝ ՕՈՒՆ-ի ոչ բավարար մակարդակ): Մյուս կողմից հարկ է նշել, որ նոր հարևան երկրների մեծ մասը դեռևս համարվում է անցումային երկիր, և դրանց տնտեսություններում առկա են մի շարք հիմնախնդիրներ՝ կապված հատկապես հարկային համակարգի և կոռուպցիայի բարձր մակարդի հետ, որոնք նպաստում են ստվերային տնտեսության առաջացմանը:

Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ Եվրոպական հարևանության քաղաքականությունը դեռևս «չի արդարացրել» իրեն: Այդ պատճառով ԵՄ նախաձեռնել է «Արևելյան գործընկերություն» ծրագիրը, որը ոչ թե փոխարինելու է, այլ լրացնելու է Եվրոպական հարևանության քաղաքականությանը: Ներկայումս ակտիվ քննարկումների գործընթացում գտնվող ԵՄ «Արևելյան գործընկերություն» ծրագրի հիմնական նպատակը Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում ԵՄ-ի հետ համագործակցող մի շարք երկրների, այդ թվում՝ Հայաստանի, միջև հարաբերությունների նոր մակարդակի հաստատումն է: «Արևելյան գործընկերություն» նոր ծրագրի շրջանակներում նախատեսվում է Արևելյան գործընկեր երկրների հետ ազատ առևտրի ռեժիմի հաստատում գրեթե նույն սկզբունքներով, որոնք գործում են Եվրոպական ընդհանուր շուկայում:

¹⁸ St'u International Country Risk Guide Indicators:

Г.Р. Айрапетян - «Влияние Европейской политики соседства на экономическое развитие Армении».

В статье были изучены вопросы влияния Европейской политики соседства на экономику Армении, а также исследованы возможности развития внешнеэкономических связей между ЕС и Арменией в рамках данной политики. Поскольку политика соседства «не оправдала» в полной мере ожиданий ни самого ЕС, ни стран-соседей, в ЕС была принята к реализации новая программа «Восточное партнерство», которая должна не заменить политику соседства, а дополнить и расширить ее спектр действия. Основной целью «Восточного партнерства» является создание зоны свободной торговли между странами-участницами.